Կոռուպցիայի կանխարգելման
հանձնաժողովի նախագահ
տիկին Հ. Հարությունյանին

ՀՀ քաղաքացի Մուշեղ Հովսեփյանից

[redacted]

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ

Հարգելի՛ տիկին Հարությունյան,

Համաձայն 2015 թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 9-րդ հոդվածների՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ հետևյալ հարցերի մասին:

1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը 2020 թվականին առաջարկե՞լ է բարեվարքության հարցերով կազմակերպիչներին բարեվարքության համակարգին առնչվող ուսումնասիրություններ իրականացնել: Եթե այո, ապա ո՞ր մարմինների բարեվարքության հարցերով կազմակերպիչներին, ե՞րբ և ի՞նչ հարցերով:
2. Օրենքով ստեղծված մարմինների (մասնավորապես ՀՀ հաշվեքննիչ պալատի և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի) պաշտոնատար անձանց կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, էթիկայի կանոնների խախտումների և իրավիճակային շահերի բախման վերաբերյալ վարույթներ հարուցվե՞լ են 2020 թվականին: Եթե այո, ապա խնդրում եմ մանրամասնել:
3. 2020 թվականին հարուցվե՞լ է վարույթ հանրային պաշտոն զբաղեցնող անձի և (կամ) հանրային ծառայողի կողմից պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն զբաղեցնելու առնչությամբ: Եթե այո, ապա խնդրում եմ մանրամասնել:
4. 2020 թվականին հարուցվե՞լ է վարույթ հանրային պաշտոն զբաղեցնող անձի և (կամ) հանրային ծառայողի կողմից վճարովի այլ աշխատանք կատարելու առնչությամբ: Եթե այո, ապա խնդրում եմ ասել, թե քանի՞սն են հարուցվել հայտարարագրերի ուսումնասիրության արդյունքում:

5. 2020 թվականին հարուցվե՞լ է վարույթ հանրային ծառայողի կողմից ծառայողական պարտականությունները կատարելիս քաղաքական չեզոքության սկզբունքի խախտման առնչությամբ:

6. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը 2020 թվականին ի՞նչ գործողություններ է ձեռնարկել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և (կամ) հանրային ծառայողների՝ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց հետ անմիջական ենթակայության կամ վերահսկողության ներքո աշխատելու արգելքի պահպանման ուղղությամբ:

7. Հայտարարագրերի ռեեստրում 2020 թվականից հրապարակվում է նաև հայտարարատու պաշտոնատար անձին եկամուտ վճարած կազմակերպության անվանումը: Որքանո՞վ է նման տվյալի չպաշտպանված լինելը համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, այդ թվում՝ «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքին:

8. Ո՞վ է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովում տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձը:

9. Ինչո՞ւ cpcarmenia.am կայքում հրապարակված չեն Հանձնաժողովի անդամների աշխատանքային հեռախոսահամարները և էլեկտրոնային փոստի հասցեները:

10. Ե՞րբ է cpcarmenia.am կայքը ամբողջությամբ համապատասխանեցվելու «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին:

Խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Շնորհակալություն:

Մուշեղ Հովսեփյան

23.12.2020

[redacted]